# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-20/1-1

ք. Երևան «16» 03 2020թ.

ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ` Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ` Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ` ծառայություն)` համաձայն սույն պայմանագրի (այսուհետ` պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի`

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը` առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է`**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում` այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում` նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի`**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է`**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը` ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված` ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3700000 (երեք միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.6000000 (վեց միլիոն) ՀՀ դրամ

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է. 13312020 (տասներեք միլիոն երեք հարյուր տասներկու հազար քսան) ՀՀ դրամ

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կատարողի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն
------------------------------ Ա. Աբգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Հեռ. (055) 84-13-12
էլ.փոստ: m-bi-r@mail.ru
------------------------------ Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
« 16 » 03 2020 թ. կնքված
ՀՀՏԿԵՆԶԿ-Ձ-ԳՀԾՁԲ-20/1-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

# ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՆԵՐ
# ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## Չափաբաժին 1. Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ Երևան քաղաքում

ՀՀ դրամ

| 1. Ընդհանուր նկարագիր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| NN | Ռուսական արտադրության ա/մ համար SU-1, SU-2 ծառայությունների անվանումները | Չափման միավոր | Տրանսպորտային միջոցների մակնիշները | | | |
| | | | ՎԱԶ-21213 2002 թ. | ՎԱԶ-21214 2002-2015 թ. | Նիվա-Շևրոլե 2123, | Ուազ Պատրիոտ 2015 թ. |
| | *SU-1 ներառվող ծառայությունների անվանում* | | | | | |
| 1 | Շարժիչ | | | | | |
| | Շարժիչի հանում և տեղադրում | հատ | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| | Շարժիչի քանդում արատավորում և հավաքում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | հատ | 200000 | 200000 | 200000 | 200000 |
| | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | հատ | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | հատ | 6000 | 6000 | 15000 | 15000 |
| | Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով | հատ | 23000 | 23000 | 23000 | 23000 |
| | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | հատ | | | | 3000 |
| | Փականների խցուկների փոխարինում | հավաքածու | 8000 | 8000 | 10000 | 10000 |
| | Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | հավաքածու | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| | Ծնկաձև լիսեռի հղկում | հատ | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| | Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում | հատ | 750 | 750 | 750 | 750 |
| | Ծնկաձև լիսեռի փոխարինում | հատ | 3750 | 3750 | 3750 | 3750 |
| | Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում | հավաքածու | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | հատ | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| | Շարժիչի բլոկի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Մխոցի փոխարինում 1 հատ | հատ | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Բաշխիչ լիսեռի հանում և փոխարինում | հատ | 25000 | 25000 | 25000 | |
| | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 | |
| | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 | |
| | Շարժիչի շղթայի փոխարինում | հատ | 15000 | 15000 | 15000 | 20000 |
| | Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում) | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Շարժիչի յուղի ռնիչի փոխարինում | հատ | 20000 | 20000 | 20000 | 29000 |
| | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Թափանիվի հանում և փոխարինում | հատ | 20000 | 20000 | 10 | 10 |
| | Թափանիվի առանցքակալի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Շարժիչի շարժաթևի փոխարինում | հատ | 12000 | 12000 | 12000 | |
| | Մխոցային օղակների փոխարինում | հավաքածու | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| | Շարժիչի հանդարտիչի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Շարժիչի քիմիական լվացում | հատ | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| | Կափույրի բնիկի նորոգում /գնեզդո/ | հատ | 5000 | | 5000 | 5000 |
| | Պարագիտ լիսեռի հղկում և վռանի տեղադրում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 2 | **Ղեկավարման, սնման և յուղման համակարգեր** | | | | | |
| | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | հատ | 12000 | 13000 | 13000 | 17000 |
| | Ավտոմեքենայի յուղում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Համակարգչային ախտորոշում | հատ | | 3000 | 3000 | 3000 |
| | Վառոցքի մոմի փոխարինում | հատ | 1500 | 1500 | 1500 | 1500 |
| | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Օդի զտիչի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Օդի ծախսաչափիչի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Բենզամղիչի փոխարինում | հատ | 13000 | 13000 | 13000 | 13000 |
| | Վառելանյութի խողովակի հանում և փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Բռնկման կարգավորում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Ղեկավարման բլոկի վերանորոգում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 3 | **Սառեցման և արտածման համակարգեր** | | | | | |
| | Հովհարի փոխարինում | հատ | 16000 | 16000 | 20000 | 20000 |
| | Ռադիատորի հանում և փոխարինում | հատ | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| | Ընդարձակող բաքի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Հովհարի շարժիչի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված | հատ | 15000 | 15000 | 18000 | 18000 |
| | Թերմոստատի փոխարինում | հատ | 13000 | 13000 | 13000 | 8000 |
| | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով | հատ | 16000 | 16000 | 22000 | 22000 |
| | Գեներատորի փոկի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 12000 | 12000 |
| | Խլարարի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Խլարարի հանում և փոխարինում | հատ | 13000 | 13000 | 13000 | 13000 |
| | Խլարարի անուրի (хамут) փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Խլարարի կախոցի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Հովացման հեղուկի փոխարինում | հատ | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 4 | **Կցորդում և ФЅ** | | | | | |
| | Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և փոխարինում | հատ | 11000 | 11000 | 11000 | 11000 |
| | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | հատ | 35000 | 35000 | 60000 | 45000 |
| | Կցորդման փողրակի հանում և տեղադրում | հատ | 2500 | 2500 | 2500 | 2500 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Կցորդման փողրակի փոխարինում | հատ | 2500 | 2500 | 2500 | 2500 |
| | Կցորդման երկժանիի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | հատ | 30000 | 30000 | 30000 | 35000 |
| | ՓՏ-ի հավաքածուի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 1500 | 1500 |
| | ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | ՓՏ-ի հանում և տեղադրում | հատ | 8000 | 8000 | 8000 | 10000 |
| | ՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում | հատ | 3000 | 3000 | 2250 | 2250 |
| | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | ՓՏ-ի առաջնային լիսեռի առանցքակալի փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| | ՓՏ-ի բարձիկի փոխարինում | հատ | 4500 | 4500 | 4500 | 4500 |
| | ՓՏ-ի յուղի փոխարինում | լ | 2200 | 2200 | 2200 | 2200 |
| | Փոխարկման մեխանիզմի կապրոնների փոխարինում | հատ | 1500 | 1500 | | |
| 5 | **Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | | | | |
| | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 | 5000 |
| | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում | հատ | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| | Կարդանի հեղույսի փոխարինում | հատ | 500 | 500 | 500 | 500 |
| 6 | **Առջևի և ետևի կամրջակներ** | | | | | |
| | Առջևի կամրջակի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Կամրջակի յուղի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Հետևի կամրջակի փոխարինում | հատ | 75000 | | | |
| | Հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| | Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում | հավաքածու | 1500 | 1500 | 1500 | 1500 |
| 7 | **Կախոց** | | | | | |
| | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 | |
| | Ձախ կամ աջ հոդակապի փոխարինում | հատ | 25000 | 25000 | 25000 | |
| | Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում | հատ | 13000 | 13000 | 13000 | 14000 |
| | Առջևի անվակունդի փոխարինում | հատ | 16000 | 16000 | 20000 | |
| | Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոցի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 | |
| | Շկվորնու փոխարինում | հատ | | | | 18000 |
| | Ռեզբավոյի փոխարինում | հատ | | | | 20000 |
| | Ծռծռակային լծակի վռանի փոխարինում | հավաքածու | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Ծռծռակային լծակի փոխարինում | հատ | 9000 | 9000 | 13000 | 13000 |
| | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | հատ | | | | |
| | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 11000 | 11000 | 13000 | 18000 |
| | Հարվածամեղմիչի վռանների փոխարինում | հատ | 1500 | 1500 | 1500 | 1500 |
| | Ներքևի լծակի հանում և տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Ներքևի լծակի վռանների փոխարինում | հատ | 2200 | 2200 | 3000 | 3500 |
| | Վերևի լծակի հանում և տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Վերևի լծակի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Վերևի լծակի վռանների փոխարինում | հատ | 2200 | 2200 | 3000 | 3200 |
| | Գնդե հոդակապի փոխարինում | հատ | 7800 | 7800 | 7800 | 7800 |
| | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Հետևի անկյունագծային լծակի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Զսպանի վռանների փոխարինում | հատ | | | | 1500 |
| | Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | հատ | 11000 | 11000 | 14000 | 18000 |
| | Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 | |
| 8 | Ղեկային մեխանիզմ | | | | | |
| | Ղեկային կալունի ձգանների փոխարինում | հատ | 8000 | 8000 | 12000 | 11000 |
| | Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 | |
| | Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները | հատ | | | | 10000 |
| | Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում | հատ | | | | 5000 |
| | Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում | հատ | | | | 3000 |
| | Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 1500 | 1500 |
| | Ղեկի փոխարինում | հատ | 5000 | | | |
| | Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 | |
| | Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում | հատ | | 5000 | 5000 | 5000 |
| 9 | **Արգելակային համակարգ** | | | | | |
| | Վակումային ուժեղարարի փոխարինում | հատ | 30000 | 30000 | 37000 | 40000 |
| | Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 11000 | 11000 | 17000 | 17000 |
| | Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Արգելակային փողրակի փոխարինում | հատ | 3500 | 3500 | 3000 | 3000 |
| | Արգելակային կոճղակների փոխարինում | հավաքածու | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| | Արգելակային համակարգի օդահանում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Թմբուկային կոճղակների փոխարինում | հավաքածու | 14000 | 14000 | 14000 | 14000 |
| | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | հատ | 13000 | 13000 | 15000 | 20000 |
| | Առջևի արգելակային սկավառակների հղկում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Հետևի արգելակային թմբուկի հղկում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Ձեռքի արգելակի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 1500 | 1500 |
| | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Ձեռքի արգելակի ճոպանի փոխարինում | հատ | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| | Արգելակային հեղուկի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 10. | **Էլեկտրասարքավորում** | | | | | |
| | Գեներատորի հանում,տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Գեներատորի փոխարինում | հատ | 40000 | 40000 | 40000 | 40000 |
| | Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| | Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Մեկնարկիչի հանում և տեղադրում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում | հատ | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| | Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում | հատ | 11000 | 11000 | 11000 | 11000 |
| | Մեկնարկիչի ածուխների փոխարինում | հավաքածու | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Վառոցքի կոճի հանում և տեղադրում | հատ | 14500 | 14500 | 8000 | 8000 |
| | Վազքաչափի ճոպանի փոխարինում | հատ | 3000 | | | |
| | Ապակելվացիչի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Ապակելվացիչի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Ապակելվացիչի շարժիչի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Ապակեամբարձիչների փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Մարտկոցի փոխարինում | հատ | 30000 | 30000 | 30000 | 32000 |
| | Տրամլյորի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 15000 | | | |
| | Լոքի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Հետևի լամպերի պանելի փոխարինում | հատ | 500 | 500 | 500 | 500 |
| | Էլ.լարերի վերանորոգում | հատ | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 11. | **Ավտոմեքենայի սրահ** | | | | | |
| | Արտաքին հայելիների հանում, տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Նստատեղի վերանորոգում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Սրահի պաստառապատում | 1 մ² | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Բեռնախցիկի ծոպանի փոխարինում | հատ | 4000 | 4000 | | |
| | Դռան ներսի բռնակի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Լամպի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Դիմապակու փոխարինում | հատ | 24000 | 24000 | 24000 | 24000 |
| 12. | **Այլ ծառայություններ** | | | | | |
| | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1մ² | 1մ² | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| | Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում գին 1մ² համար | 1մ² | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| | Եռակցման աշխատանքներ գին 1 սմ համար | 1 սմ | 500 | 500 | 500 | 500 |
| | Խառատային աշխատանքներ գին 1 սմ համար | 1 սմ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար | 1 ժամ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Ավտոմեքենայի լվացում | հատ | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| | Ավտոմեքենայի շարժիչի լվացում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Անիվի հանում և տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Անվադողի վերանորոգում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Անվադողի փոխարինում հանում տեղադրումով | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Անիվի բալանսավորում | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Անիվի վալց | հատ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Քարշակի ծառայություն գին 1կմ, համար | 1 կմ | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| | Բեռնախցիկի մեղմիչի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| | Պաշտպանիչի փոխարինում 1 հատը | հատ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | Գորգիկի փոխարինում 4 հատը | հատ | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| | **Ընդամենը** | | **1534900** | **1440900** | **1501760** | **1459960** |
| | **Ընդամենը ռուսական արտադրության ա/մ** | | **5937520** | | | |

| | Արտասահմանյան արտադրության ա/մ համար SU-1, SU-2 ծառայությունների անվանումները | Չափման միավոր | Տրանսպորտային միջոցների մակնիշները | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Տոյոտա պրադո 2004 թ., | Նիսան Իքս Թրայլ 2007 թ., | Հունդաի Սանտա Ֆե, 2008 թ., |
| Հ/Հ | **Ծառայության անվանում** | | | | |
| 1. | **Շարժիչ** | | | | |
| | Շարժիչի հանում և տեղադրում | հատ | 40000 | 40000 | 40000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Շարժիչի քանդում արատավորում և հավաքում | հատ | 20000 | 20000 | 20000 |
| | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | հատ | 25000 | 25000 | 25000 |
| | Փականների խցուկների փոխարինում | 1 կ-տ | 35000 | 35000 | 35000 |
| | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | հավաքածու | 100000 | 100000 | 100000 |
| | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | հատ | 14000 | 14000 | 14000 |
| | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | հատ | 18000 | 18000 | 18000 |
| | Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում | հատ | 14000 | 14000 | 14000 |
| | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Շարժիչի բարձիկի փոխարինում | հատ | 45000 | 45000 | 45000 |
| | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| 2 | **Ղեկավարման, սնման և յուղման համակարգեր** | | | | |
| | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | հատ | 32000 | 28000 | 32000 |
| | Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Ներածման կալեկտորի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Վառելիքի փողրակի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Վառոցքի մոմի փոխարինում | հավաքածու | 40000 | 24000 | 40000 |
| | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | հատ | 25000 | 18000 | 25000 |
| | Օդի զտիչի փոխարինում | հատ | 11000 | 11000 | 11000 |
| | Կոնդիցիոների զտիչի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 |
| | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում | հավաքածու | 16000 | 12000 | 16000 |
| | Բենզամղիչի փոխարինում | հատ | 40000 | 35000 | 40000 |
| | Բռնկման կարգավորում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | CO կարգավորում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում | հատ | 4000 | 4000 | 4000 |
| 3 | **Սառեցման և արտածման համակարգեր** | | | | |
| | Ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Ռադիատորի փոխարինում | հատ | 120000 | 90000 | 120000 |
| | Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 20000 | 20000 | 20000 |
| | Վառարանի ռադիատորի փոխարինում, | հատ | 55000 | 45000 | 55000 |
| | Գեներատորի փոկի փոխարինում | հատ | 20000 | 18000 | 20000 |
| | Ջրի ռադիատորի վերանորոգում | հատ | 30000 | 30000 | 30000 |
| | Խլարարի գոֆրայի փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 |
| | Կատալիզատորի հանում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Հովացման հեղուկի փոխարինում | հատ | 20000 | 20000 | 20000 |
| 4 | **Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | | | |
| | ԱՓՏ-ի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 40000 | 35000 | 40000 |
| | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | հատ | 15000 | 25000 | 15000 |
| | ԱՓՏ-ի յուղի փոխարինում | լ | 60000 | 60000 | 60000 |
| | ԱՓՏ-ի զտիչի լվացում, մաքրում քարտերի հանում և տեղադրումով | հատ | 10000 | 10000 | 10000 |
| 5 | **Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | | | |
| | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Կարդանային լիսեռի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Կարդանային լիսեռի միջ. կախոցի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| 6 | **Առջևի և հետևի կամրջակներ** | | | | |
| | Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Կամրջակի յուղի փոխարինում | հատ | 12000 | 12000 | 12000 |
| | Հետևի կամրջակի հանում և տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Հետևի կամրջակի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Առջևի կամ Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Առջևի կամ Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Կամրջակի յուղի փոխարինում | լ | 5000 | 5000 | 5000 |
| 7 | **Կախոց** | | | | |
| | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | հատ | 7000 | 6000 | 7000 |
| | Ձախ կամ աջ հոդակապի փոխարինում | հատ | 60000 | 45000 | 60000 |
| | Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում | հատ | 40000 | 35000 | 40000 |
| | Առջևի անվակունդի հանում և տեղադրում | հատ | 10000 | 10000 | 10000 |
| | Առջևի անվակունդի փոխարինում | հատ | 45000 | 45000 | 45000 |
| | Հետևի անվակունդի հանում և տեղադրում | հատ | 8000 | 8000 | 8000 |
| | Հետևի անվակունդի փոխարինում | հատ | 45000 | 45000 | 45000 |
| | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | հատ | 35000 | 30000 | 35000 |
| | Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց փոխարինում | հատ | 12000 | 12000 | 12000 |
| | Հարվածամեղմիչի թասակի փոխարինում | հատ | | 30000 | |
| | Առջևի Հարվածամեղմիչի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Առջևի Հարվածամեղմիչի փոխարինում | հատ | 75000 | 65000 | 75000 |
| | Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Ներքևի լծակի վռանների փոխարինում 2 հատ | հատ | 36000 | 30000 | 36000 |
| | Վերևի լծակի հանում և տեղադրում | հատ | 3000 | | 3000 |
| | Վերևի լծակի վռանների փոխարինում 2 հատ | հատ | 35000 | | 35000 |
| | Գնդե հոդակապի փոխարինում | հատ | 25000 | 20000 | 25000 |
| | Գնդե հոդակապի նորոգում | հատ | 10000 | 10000 | 10000 |
| | Առջևի կայունարարի վռանների փոխարինում 2հատ | հատ | 18000 | 16000 | 18000 |
| | Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում | հատ | 20000 | 20000 | 20000 |
| | Հետևի կայունարարի վռանների փոխարինում 2հատ | հատ | 16000 | 14000 | 16000 |
| | Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում | հատ | 20000 | 20000 | 20000 |
| | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | հատ | 80000 | 60000 | 80000 |
| | Անկյունագծային լծակի վռաների փոխարինում | հատ | 12000 | 5000 | 12000 |
| 8 | **Ղեկային մեխանիզմ** | | | | |
| | Ղեկասյունակի հիմնական նորոգում | հատ | 90000 | 70000 | 90000 |
| | Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում | հատ | 40000 | 45000 | 40000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ղեկային կալունի ձգանների փոխարինում | հատ | 22000 | 20000 | 22000 |
| | Հիդրոուժեղարարի մղիչի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Հիդրոուժեղարարի փոկի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 |
| | Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում | հատ | 20000 | 20000 | 20000 |
| | Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում | հատ | 6000 | 6000 | 6000 |
| 9 | **Արգելակային համակարգ** | | | | |
| | Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Արգելակային գլխ. գլանի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | Հավաքա-ծու | 40000 | 34000 | 40000 |
| | Արգելակային համակարգի օդահանում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | Հավաքա-ծու | 40000 | 34000 | 40000 |
| | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | հատ | 40000 | 40000 | 40000 |
| | Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ | հատ | 6000 | 6000 | 6000 |
| | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | հատ | 40000 | 40000 | 40000 |
| | Հետևի արգելակային սկավառակի հղկում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | ABS-ի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | ABS-ի տվիչի փոխարինում | հատ | 12000 | 12000 | 12000 |
| | Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում | Հավաքա-ծու | 28000 | 25000 | 28000 |
| | Արգելակային հեղուկի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| 10 | **Էլեկտրասարքավորում** | | | | |
| | Գեներատորի հանում,տեղադրում կամ փոխարինում | հատ | 50000 | 50000 | 50000 |
| | Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում | հատ | 27000 | 27000 | 27000 |
| | Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում | հատ | 30000 | 30000 | 30000 |
| | Գեներատորի փոկանիվի փոխարինում | հատ | 35000 | 3000 | 35000 |
| | Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում | հատ | 3500 | 3500 | 3500 |
| | Մեկնարկիչի խարիսխի փոխարինում | հատ | 14000 | 14000 | 14000 |
| | Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում | հատ | 10000 | 10000 | 10000 |
| | Մեկնարկիչի ռելեի փոխարինում | հատ | 2500 | 2500 | 2500 |
| | Մեկնարկիչի ածուխների փոխարինում | հատ | 20000 | 20000 | 20000 |
| | Առջևի լապտերի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Առջևի լապտերի փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Հակամշուշային լապտերի տեղադրում | հատ | 4000 | 4000 | 4000 |
| | Հետևի լապտերի հանում և տեղադրում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Հետևի լապտերի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Առջևի լապտերների կարգավորում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Վառոցքի կոճի հանում և տեղադրում կամ փոխարինում | հատ | 35000 | 30000 | 35000 |
| | Ապակելվացիչի հանում և տեղադրում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Ապակելվացիչի կամ փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Ջեռուցիչի շարժիչի հանում և տեղադրում | հատ | 4000 | 4000 | 4000 |
| | Ջեռուցիչի շարժիչի փոխարինում | հատ | 4000 | 4000 | 4000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչների փոխարինում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Դռների էլ/փականի փոխարինում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Ապակեամբարձիչի հանում և տեղադրում փոխարինում | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Մարտկոցի փոխարինում | հատ | 55000 | 48000 | 55000 |
| | Պարկտրոնիկի համակարգի տեղադրում | հատ | 22000 | 22000 | 22000 |
| | Դռների ապակիների ռետինների փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Առջևի դռան մոլդինգի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Հետևի դռան մոլդինգի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| 11 | **Ավտոմեքենայի սրահ** | | | | |
| | Լամպի փոխարինում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Պաշտպանիչ անձրևի և քամու(ветровик) տեղադրում կամ փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Համարանիշի պլաստմասայի փոխարինում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Դիմապակու փոխարինում | հատ | 55000 | 55000 | 55000 |
| 12 | **Այլ ծառայություններ** | | | | |
| | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գինը | Դր/մ² | 50000 | 50000 | 50000 |
| | Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում, գինը | Դր/մ² | 5000 | 5000 | 5000 |
| | Եռակցման աշխատանքներ գին 1սմ համար | 1սմ | 1000 | 1000 | 1000 |
| | Ավտոմեքենայի լվացում | հատ | 4000 | 4000 | 4000 |
| | Ավտոմեքենայի շարժիչի լվացում | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում | հատ | 5000 | 5000 | 5000 |
| | Կոնդիցիոների յուղի ավելացում | հատ | 1900 | 1900 | 1900 |
| | Անիվի հանում և տեղադրում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Անվահեծի նորոգում 1 հատ | հատ | 2000 | 2000 | 2000 |
| | Անվադողի վերանորոգում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Անվադողի քանդում հավաքում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Անիվի բալանսավորում | հատ | 1000 | 1000 | 1000 |
| | Անիվի վալց | հատ | 3000 | 3000 | 3000 |
| | Ավտոմեքենայի սրահի չոր քիմ մաքրում | հատ | 19600 | 19600 | 19600 |
| | Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար | 1կմ | 1000 | 1000 | 1000 |
| **Ընդամենը** | | | **2536500** | **2301500** | **2536500** |
| **Ընդամենը արտասահմանյան արտադրության ա/մ** | | | **7374500** | | |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | | **13312020** | | |

**Մատուցվող ծառայությունների արժեքները ներկայացվում են միավորի համար:**

Նշված ծառայությունները իրականացվելու են Երևան քաղաքում:

Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ է հետևյալ տեխնիկական միջոցների առկայությունը.

- Տաքացվող բոքսեր
- Մեքենայի ֆիքսված ամբարձիչ
- Դողերի քանդման, հավաքման և հավասարակշռման ստենդ
- Անվաբացքի կարգավորման ստենդ
- Ինժեկտորի լվացման և կարգավորման ստենդ
- Արտանետված CO գազի ստուգման ստենդ
- Լուսարձակների կարգավորման ստենդ
- Արգելակների ստուգման ստենդ
- Ախտորոշման/դիագնոստիկ սարք նշված ավտոմեքենաների ծրագրով
- Ավտոէվակուատոր նվազագույնը 3.5տ բեռնատարողությամբ, որը կանչը ստանալուց հետո 30 րոպեի ընթացքում կարող է դուրս գալ դեպի վթարի (խափանման) վայր:

Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ է հետևյալ մասնագետների առկայությունը.

- Ավտոփականագործ
- Շարժիչագործ
- Ավտոէլեկտրիկ

Մատուցված ծառայությունների համար երաշխիքը՝ 1 ամիս, պահեստամասերի համար՝ 1 ամիս:
Ծառայությունների արժեքի մեջ հաշվարկված է նաև պահեստամասերի արժեքը:

Ծառայությունների մատուցումն իրականացվելու է ըստ անհրաժեշտության՝ պատվիրատուի պահանջով, տեխնիկական միջոցը կատարողի մոտ մուտքագրվելու օրվանից հաշված 2 օրացուցային օրվա ընթացքում:

Ավտոմեքենայի վերանորոգման համար Կատարողը պարտավոր է ընդունել այն և անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, ապամոնտաժման, զննման և գնահատման աշխատանքներ: Յուրաքանչյուր ավտոմեքենայի վերանորոգման համար առաջին հերթին կազմվում է ներկայացված ավոտոմոբիլի թերությունների երկկողմանի ակտ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

---------------------------------- Ա. Աբգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Հեռ. (055) 84-13-12
Էլ.փոստ: m-bi-r@mail.ru

-------------------------------- Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«16» 03 2020 թ. կնքված
ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԾՁԲ-20/1-1 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատես-ված չափա-բաժնի համարը | գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդա-մենը |
| 1 | 50111130/1 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ Երևան քաղաքում | | | 370000 | 740000 | 1110000 | 1480000 | 1850000 | 2220000 | 2590000 | 2960000 | 3330000 | 3700000 | 3700000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
հ/հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն
------------------------------ Ա. Աբգարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Հեռ. (055) 84-13-12
էլ.փոստ. m-bi-r@mail.ru

------------------------------ Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ ________________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ________________
հհ______________________________
հվհհ____________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`
_______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը` __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները`

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 16 » 03 2020 թ. կնքված*
*ՀՀՏԿԵՆԶԿ-Ձ-ԳՀԾՁԲ-20/1-1 պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն